Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 131-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

Երևան 2018

Բովանդակություն

Ներածություն 3

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը 5

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը 23

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները 26

IV. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ 28

V. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ 30

Հավելված N 1 32

Հավելված N 2 33

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի գործունեության ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացված են ամփոփ տեղեկություններ.

- տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման,
- տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի,
- տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմների,
- մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների,
- օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթների վերաբերյալ:

Ծրագրի նպատակներն են՝

1. պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը ապրանքային շուկաներում,
2. ապահովել բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր,
3. նպաստել տնտեսական զարգացման համար բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը և սպառողների շահերի պաշտպանությանը,
4. խթանել մրցակցային մշակույթը:

Վերը նշված նպատակները համապատասխանում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) Հանձնաժողովի առջև դրված խնդիրներին, շուկայական տնտեսության զարգացման նպատակով պետության կողմից որդեգրված հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև արդի տնտեսական և իրավական պայմաններում մրցակցային մշակույթի զարգացման պահանջներին:

Հանձնաժողովը, Օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում, 2019 թվականի ընթացքում շարունակելու է ուսումնասիրություններն ապրանքների և ծառայությունների շուկաներում՝ մենաշնորհ և գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների, անբարեխիղճ մրցակցության դեպքերի և շուկաներում անհավասար մրցակցային միջավայր ձևավորող երևույթների բացահայտման, ինչպես նաև համակենտրոնացման նկատմամբ իրականացվող վերահսկողության ուղղությամբ:

Միաժամանակ, արդյունավետորեն գործող տնտեսական մրցակցության միջավայրը՝ հանդիսանալով հասարակական կյանքի տարբեր բնագավառներին սերտորեն առնչվող համակարգ, չի կարող ձևավորվել միայն Հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքների արդյունքում: Հետևապես մեծ կարևորություն է ներկայացնում տնտեսության առանձին ոլորտները կարգավորող և տվյալ ոլորտներում վարչարարություն իրականացնող բոլոր պետական մարմինների կողմից, գործարար համայնքին առնչվող գործողություններում, արդար և հավասար մոտեցումների կիրառումը:

Հանձնաժողովը ծրագրային աշխատանքներ իրականացնելիս հաշվի է առնում միջազգային փորձը, ուսումնասիրում է համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ներքին շուկայի մրցակցային իրավիճակի վրա, ինչպես նաև համագործակցում է տնտեսական մրցակցության ոլորտում գործունեություն իրականացնող միջազգային կառույցների հետ: Այդ նպատակով Հանձնաժողովը կշարունակի իրականացնել արդյունավետ, լայնածավալ և ակտիվ համագործակցություն մի շարք միջազգային կազմակերպությունների, Եվրասիական տնտեսական միության, ԱՊՀ մասնակից պետությունների, ԵԱՏՄ անդամ պետությունների, արտերկրի մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների հետ հետևյալ ուղղություններով.

- մրցակցության քաղաքականության կիրարկման լավագույն փորձի փոխանակում,
- միջազգային փորձին համահունչ մրցակցային միջավայրի բարելավում,
- թիրախային ոլորտների ապրանքային շուկաներում առկա մրցակցության իրավիճակի ուսումնասիրությունների իրականացման նպատակով Հանձնաժողովի աշխատակիցների կարողությունների զարգացում,
- գործընկերության ամրապնդում, համատեղ ծրագրերի և վարույթների իրականացում,
- մրցակցության քաղաքականության մասին իրազեկվածության բարձրացում,
- մրցակցային խնդիրների վերաբերյալ խորհրդատվության անհրաժեշտության դեպքում միջազգային փորձագետների ներգրավում,
- Հանձնաժողովի աշխատակիցների և այլ թիրախային խմբերի ներկայացուցիչների համար թեմատիկ դասընթացների և սեմինարների կազմակերպում:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականություն իրականացնող ինքնավար մարմին է: Հանձնաժողովի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը եւ սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Վերջին տարիների ընթացքում Հանձնաժողովը տարբեր ապրանքային շուկաներում իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ, գործարար համայնքի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ՝ նպատակ ունենալով բացահայտել մեր երկրում տնտեսական մրցակցության բնագավառում առկա խնդիրները: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին Հանձնաժողովի կողմից նախաձեռնված օրենսդրական փոփոխությունները և միջազգային լավագույն փորձի վրա հիմնված մրցակցության պաշտպանության քաղաքականության կիրարկումը էապես բարելավել են մրցակցային միջավայրը Հայաստանի Հանրապետությունում: Փոփոխություններ արձանագրվել են բազմաթիվ ապրանքային շուկաներում, այդ թվում՝ այնպիսի շուկաներում, որոնք մրցակցության առումով համարվել են ռիսկային՝ պայմանավորված կենտրոնացվածության բարձր աստիճանով: Բացի այդ, վերջին տարիներին բարձրացել է հասարակության և բիզնեսի իրազեկվածության մակարդակը Հանձնաժողովի գործունեության և լիազորությունների վերաբերյալ, ինչն արդյունք է առավելագույնս բաց և թափանցիկ աշխատանքի, ինչպես նաև մրցակցության խնդիրների շուրջ գործարար համայնքի հետ ձևավորված սերտ փոխգործակցության:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ քաղաքացիների կողմից Հանձնաժողով ստացվող բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հասարակության շրջանում դեռևս առկա է թյուր կարծիք Հանձնաժողովի գործառույթների վերաբերյալ: Մասնավորապես՝ Հանձնաժողովի գործունեությունը կապվում է երկրում տարբեր ապրանքների և ծառայությունների գների կարգավորման հետ, որն իրականում գտնվում է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից դուրս: Գործող օրենսդրությամբ Հանձնաժողովը գների կարգավորման գործառույթներ չունի: Ապրանքների և ծառայությունների գների վերահսկման նկատմամբ Հանձնաժողովի

իրավասությունները վերաբերում են բացառապես այն շուկաներին, որտեղ առկա են գերիշխող դիրքի չարաշահման երևույթներ, հակամրցակցային համաձայնությունների և անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ: Ընդ որում, այս դեպքում ևս գերիշխող դիրք ունեցող ընկերություններն իրենք են սահմանում և փոփոխում ապրանքների և ծառայությունների իրացման գներ, իսկ Հանձնաժողովի լիազորությունները վերաբերում են միայն այն դեպքերին, երբ գնային փոփոխությունները պայմանավորված չեն շուկայական տնտեսությանը բնորոշ տնտեսական մեխանիզմներով:

Տնտեսական մրցակցության արդյունավետ միջավայրի ձևավորման առումով առավել կարևոր է շուկայում գործունեության իրականացման համար հավասար պայմանների ապահովումը, որը որպես կանոն հանգեցնում է շուկաներում մասնակիցների քանակի ավելացմանը, սպառողներին իրացվող ապրանքների գների նվազմանը և որակի բարձրացմանը: Բնականաբար ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում մրցակցային միջավայրի ձևավորումը հնարավոր չէ ապահովել միայն մրցակցության պաշտպանությամբ զբաղվող մարմնի աշխատանքների արդյունքում, այլ դրան հնարավոր է հասնել իրավական դաշտի բարելավման և պետական համապատասխան մարմինների հավասար և արդար վարչարարության արդյունքում: Այս առումով Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին 4 տարվա ընթացքում լայն սպառման բազմաթիվ ապրանքային շուկաներում արձանագրվել է մրցակցային միջավայրի բարելավում, ինչը դրսևորվել է շուկայի մասնակիցների քանակի էական ավելացմամբ: Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մամուլում հաճախ են լինում հրապարակումներ լայն սպառման ապրանքների ոլորտում մուտքի խոչընդոտների առկայության վերաբերյալ՝ Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել մի շարք ապրանքային շուկաներում: Կատարված ուսումնասիրությունների ընթացքում դիտարկվել են այնպիսի ապրանքատեսակներ, որոնք մի կողմից հանդիսանում են լայն սպառման և (կամ) սոցիալական նշանակության ապրանքներ, մյուս կողմից տվյալ շուկաներում ներմուծման մասնաբաժինը շուկայի ընդանուր ծավալում էական է: Ուսումնասիրության շրջանակներում դիտարկված 18 ապրանքային խմբերում (ալյուր, մարգարին, բրինձ, մակարոնեղեն, բուսական յուղ, հավի միս, խոզի միս, ոսպ, ոլոռ, ցորեն, շոկոլադե սալիկներ, բատոններ և այլ շոկոլադե ապրանքներ, կակաո, խնամքի պարագաներ, շամպուն, մաքրող միջոցներ) 2014-2017 թվականների ընթացքում ներմուծող ընկերությունների քանակն ավելացել է, որը փաստում է տվյալ շուկաներում մուտքի խոչընդոտների բացակայության և մրցակցային միջավայրի բարելավման մասին: Նշված 18 ապրանքային

շուկաներում ներմուծում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների քանակը 2017 թվականին կազմել է 1 620՝ 2014 թվականի 936-ի փոխարեն: Ընդ որում՝ նշված դրական դինամիկան արձանագրվել է դիտարկվող բոլոր տարիների ընթացքում և միջինացված կարգով տնտեսվարող սուբյեկտների քանակը տարեկան աճել է շուրջ 24 տոկոսով: Հարկ է նկատել, որ պայմանավորված Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցությամբ հատկապես ավելացել են ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծող տնտեսվարող սուբյեկտների քանակը: Այսպես, եթե 2014 թվականին դիտարկվող ապրանքատեսակները ներմուծում էին 284 տնտեսվարող սուբյեկտներ, ապա 2017 թվականին նրանց քանակն ավելացել է ավելի քան երեգ անգամ՝ կազմելով 951 տնտեսվարող սուբյեկտ: Այսպես օրինակ ալյուրի գծով ներմուծողների քանակն ավելացել է ավելի քան 4 անգամ, մարգարինի գծով՝ շուրջ 3 անգամ, մակարոնեղենի գծով՝ 2 անգամ, հավի մսի գծով՝ 2 անգամ, նպարեղենի առանձին տեսակների գծով՝ ավելի քան երկու անգամ և այլն (տես՝ Հավելված N 1):

Միաժամանակ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում ունեցած ձեռքբերումների և դեռևս առկա խնդիրների վերաբերյալ էական կարևորություն են ներկայացնում միջազգային մասնագիտացված կազմակերպությունների գնահատականները, որոնց հիման վրա մրցակցային մարմիններն իրականացնում են համապատասխան վերլուծություններ և անհրաժեշտության դեպքում՝ նաև շտկումներ: Այս առումով տարբեր երկրներում տնտեսական մրցակցության քաղաքականությամբ և մրցակցության պաշտպանությամբ զբաղվող պետական լիազոր մարմնի կողմից իրականացվող գործունեության արդյունավետության և շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություններ է իրականացնում «Համաշխարհային տնտեսական ֆորում» միջազգային կազմակերպությունը: Կազմակերպության կողմից կատարվող ուսումնասիրությունները ներկայացվում են ամենամյա զեկույցների ձևով, որոնց շարքին է դասվում նաև Համաշխարհային մրցունակության զեկույցը:

Նշված զեկույցում ներկայացվում են մոտ 140 երկրների տնտեսական և հասարակական կյանքին վերաբերող բազմաթիվ ցուցանիշներ, որոնցից երեքը վերաբերում են երկրների տնտեսական մրցակցության միջավայրին և մրցակցային քաղաքականության արդյունավետությանը: Ընդհանուր առմամբ Հայաստանի վերաբերյալ նշված երեք ցուցանիշների գծով 2010 թվականից ի վեր արձանագրվել է զգալի առաջընթաց: Մասնավորապես հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշով Հայաստանը 2017 թվականին զբաղեցրել է 40-րդ հորիզոնականը, 2016 թվականին՝ 77-րդ հորիզոնականը՝ 2010

թվականին 138-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 98 կետ (տես՝ Գծանկար N 1):

Գծանկար N 1

Հայաստանում և մի շարք երկրներում հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշի դինամիկան 2010-2017 թվականների ընթացքում



Մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշով 2017 թվականին Հայաստանը զբաղեցրել է 28-րդ հորիզոնականը, 2016 թվականին՝ 51-րդ հորիզոնականը՝ 2010 թվականի 133-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 105 կետ (տես՝ Գծանկար N 2):

Գծանկար N 2

Հայաստանում և մի շարք երկրներում մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշի դինամիկան 2010-2017 թվականների ընթացքում



Դիտարկվող հաջորդ ցուցանիշը ներքին շուկայում մրցակցության ուժգնությունն է, որի գծով 2017 թվականին զբաղեցրել ենք 66-րդ հորիզոնականը, 2016 թվականին՝ 91-րդ հորիզոնականը՝ 2010 թվականին 136-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 70 կետ (տես՝ Գծանկար N 3):

Գծանկար N 3

Հայաստանում և մի շարք երկրներում ներքին շուկայում մրցակցության ուժգնության ցուցանիշի դինամիկան 2010-2017 թվականների ընթացքում



Նշենք, որ ներկայացված ցուցանիշները միջազգային համեմատությունների տեսանկյունից Հայաստանի համար ապահովում են շատ ավելի նպաստավոր դիրք, քան ունեն տարածաշրջանային և ԱՊՀ մասնակից որոշ երկրներ (տես՝ Հավելված N 2):

Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության իրականացման ընթացքում առանձնապես կարևորվում է ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը: Միաժամանակ, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրարկման տեսանկյունից հատուկ ուշադրության են արժանի տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկաներում մրցակցության սահմանափակման, կանխման և արգելման այն գործողությունները կամ վարքագիծը, որոնք կարող են հանգեցնել.

- մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահմանը,
- հակամրցակցային համաձայնությունների կնքմանը (կայացմանը),
- գործողության մեջ դրված չհայտարարագրված կամ արգելված համակենտրոնացմանը,
- անբարեխիղճ մրցակցության գործողությանը,

- արգելված պետական օժանդակությանը:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեև շուկաներում մրցակցային միջավայրը բարելավվել է, այդուհանդերձ լինում են ոչ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտներ, որոնք խախտելով տնտեսական մրցակցության օրենսդրության դրույթները՝ սահմանափակում են մրցակցությունը շուկաներում և ստեղծում գործունեության անհավասար պայմաններ: Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում առկա խնդիրների ներկայացման նպատակով ստորև բերված են մի շարք ուսումնասիրություններ:

Մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի բացահայտման ուղղություն

Ապրանքային շուկաներում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի վերաբերյալ նախորդ տարիներին իրականացված Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված սուբյեկտները կարող են օգտվել տնտեսական իրավիճակի փոփոխություններից և գերիշխող դիրքի չարաշահման ճանապարհով առավելության հասնել մրցակիցների նկատմամբ: Հանձնաժողովի կողմից, վերջին շրջանում, իրականացված մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների վարքագծին առնչվող մի շարք ուսումնասիրություններ, տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման տեսանկյունից, ունեն կարևոր նշանակություն:

Այսպես, մանրածախ առևտրի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտից ստացված բողոքի հիման վրա Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել ծխախոտի շուկայում: Մասնավորապես բողոքում դիմումատուն հայտնել է, որ «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունը դադարեցրել է իրեն ծխախոտի մատակարարումը, ինչի արդյունքում մանրածախ առևտրի ոլորտում դիմումատուն հայտնվել է անհավասար մրցակցային պայմաններում և առաջացել են շուկայից դուրս մղման ռիսկեր: Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրությամբ պարզել է, որ «Գրանդ Դիլինգ» ընկերության կողմից դիտարկվող առևտրի օբյեկտ ծխախոտի մատակարարման դադարեցումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ դիմումատուն վերադարձրել է «Գրանդ Տոբակո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող ծխախոտի ցուցապահարանը: Միաժամանակ Հանձնաժողովը պարզել է, որ դիմումատուն պատրաստ է ձեռքբերել և իրացնել «Գրանդ Դիլինգ» ընկերության կողմից մատակարարվող ծխախոտը՝ այն ցուցադրելով առևտրի օբյեկտում տեղադրված այլ

ցուցապահարանի միջոցով: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «Գրանդ Դիլինգ» և «Գրանդ Տոբակո» ընկերությունները հանդիսանում են անձանց խումբ և ունեն գերիշխող դիրք ծխախոտի շուկայում: Բացի այդ, համաձայն կատարված ուսումնասիրության մանրածախ առևտրի ոլորտում գործում են բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ, որոնց «Գրանդ Դիլինգ» ընկերությունը մատակարարում է ծխախոտ՝ անկախ տվյալ առևտրի օբյեկտներում «Գրանդ Տոբակո» ընկերության ցուցապահարանի տեղադրված լինելու հանգամանքից: Հանձնաժողովը նաև պարզել է, որ «Գրանդ Դիլինգ» ընկերությունը չունենալով հստակ չափանիշներ կիրառել է խտրական մոտեցում միևնույն գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար՝ շուկայում ստեղծելով անհավասար մրցակցային պայմաններ: Վերը նշված գործողությունը Հանձնաժողովը որակել է որպես գերիշխող դիրքի չարաշահում, կիրառել պատասխանատվության միջոց և տվել խախտումները վերացնելու հանձնարարական:

Հաշվի առնելով մանրածախ առևտրի ոլորտի կարևորությունը տնտեսության զարգացման և առանձին շուկաներում մրցակցային պայմանների բարելավման գործում՝ Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով բացահայտել մրցակցային միջավայրի զարգացմանը խոչընդոտող գործոնները: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մանրածախ առևտրի ոլորտում առկա են գերիշխող դիրք ունեցող ընկերություններ, որոնց պատկանող առևտրի օբյեկտները լայնորեն ներկայացված են Երևանի գրեթե բոլոր վարչական շրջաններում: Հիմք ընդունելով նախկինում մանրածախ առևտրի ոլորտի ներկայացուցիչներից ստացված բողոքները՝ Հանձնաժողովը դիտարկել է՝ արդյոք գերիշխող դիրք ունեցող առևտրային ցանցերի ընդլայնումը կատարվում է մրցակցության օրենսդրության հնարավոր խախտումների միջոցով և որոնք են առևտրային ցանցերի ունեցած առավելությունները այլ առևտրի օբյեկտների նկատմամբ: Համաձայն կատարված ուսումնասիրության ինչպես գերիշխող դիրք ունեցող առևտրային ցանցերի, այնպես էլ փոքր ու միջին այլ առևտրի օբյեկտների ընդլայնման հիմնական խոչընդոտներն են շուկայի հագեցվածության բարձր մակարդակը և ցածր եկամտաբերությունը: Կատարված հաշվարկները փաստում են, որ գերիշխող առևտրային ցանցերը չունեն էական առավելություն ապրանքների ձեռքբերման գների հարցում և լայն սպառման ապրանքներից կարագի, ծխախոտի, ձեթի, սուրճի, բնական հյութերի, երշիկեղենի դեպքում ձեռքբերման գները ցածր են ընդամենը 1-2 տոկոսով, իսկ գերիշխող դիրք ունեցող առևտրային ցանցերի իրացման գները ցածր են 1-4 տոկոսով: Իրականացված վերլուծությունը հիմք ընդունելով՝ կարող ենք նշել, որ գերիշխող դիրք ունեցող առևտային ցանցերը միավոր

ապրանքատեսակի գծով աշխատում են ավելի փոքր մարժայով, քան այլ առևտրի օբյեկտները: Բացի այդ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն այլ առևտրի օբյեկտների, գերիշխող դիրք ունեցող առևտրի օբյեկտները չեն սահմանափակվում միայն պարենային ապրանքների և ալկոհոլային խմիչքների իրացմամբ, այլ նաև իրացնում են տնտեսական ապրանքներ, խնամքի միջոցներ, խաղալիքներ, գրենական պիտույքներ, սպասք, օծանելիք, կենցաղային տեխնիկա, հագուստ, ինչի արդյունքում էապես մեծանում են սպառողների ներգրավման հնարավորությունները: Ըստ էության առևտրային ցանցերի առավելությունը սպառողների նախապատվության հարցում դրսևորվում է ոչ միայն ցածր գների, ապրանքների լայն տեսականու, սպասարկման բարձր որակի (այդ թվում՝ ինքնասպասարկման հնարավորության), բրենդի ճանաչվածության և այլնի միջոցով:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում վերհանվել են ոլորտում մրցակցային իրավիճակի զարգացման հնարավոր ուղիները: Այսպես.

1. Այն դեպքում, երբ ընկերությունը, ում պատկանում է առևտրային ցանց, իրականացնում է նաև ապրանքների ներմուծում կամ արտադրություն՝ ունենալով գերիշխող դիրք տվյալ ապրանքների շուկայում, այդ ապրանքներն իրեն պատկանող առևտրի ցանցում լինում են ավելի էժան, քան այլ առևտրի օբյեկտներում: Վերը նշվածի հետևանքով այլ առևտրի օբյեկտները հաճախ չունեն հնարավորություն ձեռքբերելու այդ ապրանքներն այլ ընկերություններից և ստիպված են իրենց առևտրի օբյեկտներում դրանք իրացնել ավելի թանկ գներով: Խնդրի լուծման նպատակով կարծում ենք անհրաժեշտ է օրենսդրորեն տարանջատել մանրածախ և մեծածախ գործունեությունը՝ զրկելով առևտրային ցանցերին օգտվելու ներմուծման և արտադրության գործունեության հաշվին առաջացող առավելությունից:

2. Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ առևտրային ցանցերը չունեն մատակարարների ընտրության որոշակի և հստակեցված չափանիշներ, ինչի արդյունքում կարող են առաջանալ անհավասար մրցակցային պայմաններ մատակարարների ընտրության և հետագա համագործակցության հարցերում: Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է սահմանել օրենսդրական պահանջ, որով առևտրային ցանցերը կպարտավորվեն մշակել մատակարարների ընտրության օբյեկտիվ, հստակ և հրապարակային չափանիշներ, որի արդյունքում կապահովվի առավել թափանցիկ և կանխատեսելի հարաբերություններ առևտրային ցանցերի և մատակարարների միջև:

Հակամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) բացահայտման ուղղություն

Հանձնաժողովի փորձը ցույց է տալիս, որ մասնակիցների փոքր թիվ և բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում գործող խոշոր տնտեսվարող սուբյեկտները, հնարավոր մրցակիցների նկատմամբ առավելության հասնելու և շահութաբերության զգալի մակարդակ ապահովելու նպատակով, կարող են միմյանց հետ կնքել հակամրցակցային համաձայնություններ՝ խաթարելով ազատ մրցակցային միջավայրի ձևավորման և մրցակցության զարգացման հեռանկարները: Հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով Հանձնաժողովը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում պետական գնումների ոլորտը: Պետական գնումների գործընթացում տեղի ունեցող հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը և կանխարգելումը նպաստում է տվյալ ոլորտի կարգավորմանը, շուկայի մասնակիցների բնականոն գործունեության համար անհրաժեշտ մրցակցային միջավայրի ապահովմանը, պետական միջոցների արդյունավետ օգտագործմանը և սպառողների շահերի պաշտպանությանը:

Այս ուղղությամբ Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություններ բժշկական, սոցիալական, կրթական և այլ ոլորտներում գործող տասնյակ պետական մարմինների, համայնքների կողմից կազմակերպված մրցույթների վերաբերյալ, որոնց արդյունքում բացահայտված երևույթները թեև մրցակցության օրենսդրության տեսանկյունից հակամրցակցային համաձայնության երևույթներ չեն պարունակել, այդուհանդերձ դրանք կարող են ազդել մրցույթներում ազատ և արդար մրցակցային միջավայրի ձևավորման վրա:

Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից 2018 թվականի ընթացքում նախաձեռնվել են պետական և Տեղական ինքնակառավարման մի շարք մարմինների պետական գնումների մրցույթների ուսումնասիրություններ, որոնք դեռևս շարունակվում են: Նշված ուսումնասիրությունների նախնական արդյունքներով կարող ենք ասել, որ առկա են դեպքեր, երբ մրցույթների հրավերներում պետական մարմինները նշել են կոնկրետ ապրանքային նշանով ապրանքներ, կամ էլ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմել են այնպես, որ դրանց համապատասխանել են կոնկրետ ներմուծող կամ արտադրող ընկերության ապրանքները: Հաշվի առնելով, որ մրցույթների մասնակից տնտեսվարող սուբյեկտները որպես կանոն մասնագիտացած են կոնկրետ ապրանքային նշաններով ապրանքների ներմուծման կամ արտադրության գործընթացում, ուստի տնտեսվարող սուբյեկտների մի մասը չի կարողանում մասնակցել մրցույթներին, ինչի արդյունքում նշված մրցույթներում չի ապահովում անհրաժեշտ

մրցակցություն: Հարկ է նշել, որ նմանօրինակ խնդիրները Հանձնաժողովը ներկայացնում է մրցույթն իրականացնող պետական և Տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններին, ինչպես նաև վերջիններիս վերադաս մարմիններին՝ առաջարկելով վերանայել նման մոտեցումները և հետագայում ձեռնպահ մնալ մրցակցությունը սահմանափակող գործողություններից:

Հակամրցակցային համաձայնությունների բացահայտման առումով կարևորվում է ավիատոմսերի շուկայում կատարված ուսումնասիրության արդյունքները: Այսպես, էլեկտրոնային լրատվական միջոցներով ավիագործակալների միության վերաբերյալ հրապարակված հոդվածի հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ավիատոմսերի վաճառք իրականացնող ընկերությունները (ավիատոմսարկղեր) հիմնականում չունեն ուղիղ պայմանագրեր ավիաընկերությունների հետ (օրինակ՝ Աէրոֆլոտ, Ֆլայ Դուբայ, Ավստրիական ավիաուղիներ և այլն): Ավիաընկերությունների հետ ուղիղ պայմանագրեր ունեն միայն սահմանափակ թվով ընկերություններ, որոնք ունեն խոշոր ֆինանսական ռեսուրսներ, աշխատանքային համապատասխան տարիների փորձ և բավարարում են տվյալ ավիաընկերությունների հետ ուղիղ պայմանագրեր կնքելու համար այդ ավիաընկերությունների կողմից սահմանվող այլ չափանիշներին: Միաժամանակ ավիաընկերությունների հետ ուղիղ պայմանագրեր ունեցող ընկերություններն իրենց հերթին ենթագործակալական պայմանագրեր են կնքում ավիատոմսեր վաճառող տասնյակ փոքր ընկերությունների հետ (ավիատոմսարկղ): Համաձայն գործող մեխանիզմի փոքր ընկերություններն (ավիատոմսարկղ) իրացված ավիատոմսերի դիմաց ստանում են համապատասխան վճար արտահայտված տոկոսներով՝ կախված տոմսի արժեքի և համապատասխան նվազեցումների տարբերության արդյունքում ձևավորվող գումարից: Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ավիագործակալների միությունն իր գործողություններով սահմանափակել է իր անդամների միջև մրցակցությունը:

Այսպես, Ավիագործակալների միությունն իր կանոնադրությամբ սահմանել է դրույթներ, որոնց համաձայն արգելում է իր անդամներին համագործակցության ավելի նպաստավոր պայմաններ առաջարկել և ենթագործակալական պայմանագրեր կնքել այն ավիատոմսարկղերի հետ, որոնց հետ արդեն իսկ աշխատում է միության մեկ այլ անդամ: Ըստ էության նման վարքագծի արդյունքում ռիսկեր են առաջանում, որ խոշոր ընկերություններն արհեստականորեն կարող են բաժանել շուկան միմյանց միջև: Մինչդեռ փոքր ընկերությունները (ավիատոմսարկղ), հանդիսանալով շահույթ հետապնդող կազմակերպություններ, որպես կանոն, ավիատոմսերի

վաճառքի ենթագործակալական պայմանագրերը կնքում են այն խոշոր ընկերությունների հետ, որոնց կողմից տրվող գործակալական տոկոսավճարներն ավելի բարձր են: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ավիատոմսեր վաճառող փոքր ընկերությունները հնարավորություն չեն ստանում զարգանալու՝ ենթագործակալական պայմանագրեր կնքելով այն խոշոր ընկերությունների հետ, ում հետ ցանկանում են:

Վերը նշված փաստերը հիմք ընդունելով՝ Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում ընդունել է որոշում՝ միությանը տալով զգուշացում, հանձնարարելով վերացնել մրցակցության սահմանափակման վերը թվարկված երևույթները և հետագայում ևս ձեռնպահ մնալ մրցակցության օրենսդրության խախտումներ կատարելուց:

Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության բացահայտման ուղղություն

Հանձնաժողովը, Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, հսկողություն է իրականացնում նաև տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների նկատմամբ: Այս ուղղությամբ Հանձնաժողովը հսկողություն է իրականացնում խոշոր ընկերությունների նկատմամբ, որոնք հասույթի կամ ակտիվների մեծությամբ գերազանցում են օրենսդրությամբ սահմանված շեմերը: Համակենտրոնացումների նկատմամբ հսկողություն իրականացնելով՝ Հանձնաժողովը նպատակ ունի բացահայտելու և համապատասխան ռիսկերի առկայության պարագայում թույլ չտալու, որպեսզի միևնույն շուկայում կամ միմյանց հետ փոխկապակցված շուկաներում գործունեություն իրականացնող կազմակերպությունները հայտնվեն միևնույն անձի և (կամ) կազմակերպության կառավարման ներքո այն դեպքերում, երբ գործարքի արդյունքում համապատասխան շուկայում կարող է սահմանափակվել մրցակցությունը: Ըստ էության, Հանձնաժողովի կողմից առանձնահատուկ ուշադրության են արժանանում հայտարարագրման ենթակա և տնտեսական մրցակցությանն էապես խոչընդոտող, այդ թվում՝ գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացումները: Սահմանված ընթացակարգի համաձայն մինչև համակենտրոնացումների գործողության մեջ դնելը պարտադիր է ստանալ Հանձնաժողովի թույլտվությունը: Սակայն Հանձնաժողովի կողմից վերջին տարիներին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են բազմաթիվ ընկերություններ, որոնք սահմանված կարգով չեն ստացել Հանձնաժողովի թույլտվությունը և կատարել են համակենտրոնացման գործարքներ: Բացահայտված բոլոր դեպքերի առնչությամբ

Հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթներ և կիրառել պատասխանատվության միջոցներ, ինչպես նաև աշխատանքներ է իրականացրել տնտեսվարող սուբյեկտների տնտեսական մրցակցության օրենսդրության դրույթների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման առումով, ինչի արդյունքում վերջին տարիներին ավելացել են Հանձնաժողով ստացվող դիմումների քանակը և էապես նվազել են առանց Հանձնաժողովի թույլտվությունը ստանալու՝ համակենտրոնացման գործարքների իրականացման դեպքերը:

Միաժամանակ նշենք, որ համակենտրոնացումների նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման ուղղությամբ Հանձնաժողովի համար հասանելի չեն բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների վերաբերյալ տեղեկությունները: Մասնավորապես, բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների վերաբերյալ փոփոխությունները գրանցվում են ռեեստր վարող կազմակերպություններում, հետևաբար Հանձնաժողովի կողմից բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների, վերակազմակերպումների և վերջիններիս կողմից չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման համար տեղեկատվական աղբյուրները բացակայում են: Ըստ այդմ՝ Հանձնաժողովի տեսադաշտից դուրս են մնում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունում և այլ ռեեստր վարող կազմակերպություններում արժեթղթերով կատարվող գործարքների և այդ գործարքները կատարած անձանց վերաբերյալ տվյալները, և Հանձնաժողովը, ըստ էության, զրկված է նշված գործարքների նկատմամբ վերահսկողության իրականացման հնարավորությունից: Այս կապակցությամբ Հանձնաժողովը նախաձեռնել է օրենսդրական փոփոխություններ, որոնց ընդունման դեպքում Հանձնաժողովի համար բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կդառնա հասանելի և առավել արդյունավետ կդարձնի համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողությունը: Հանձնաժողովը, 2018 թվականի ծրագրային տարում, շարունակելու է ուսումնասիրությունները ինչպես տնտեսվարող սուբյեկտների կողմից նոր գործարքների կայացման ուղղությամբ, այնպես էլ նախկինում չհայտարարագրված համակենտրոնացման գործարքները բացահայտելու և տվյալ շուկայում վերջինիս ունեցած ազդեցությունը գնահատելու ուղղությամբ:

Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտման ուղղություն

Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացնում նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից անբարեխիղճ մրցակցության գործողությունները բացահայտելու և նրանց

գործողությունները կանխարգելելու ուղղությամբ: Հանձնաժողովի կողմից նախկինում իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ անբարեխիղճ մրցակցությունը հիմնականում դրսևորվում է հասարակության մոլորեցման միջոցով, երբ տնտեսվարող սուբյեկտներն ապրանքների մակնշման և գովազդի գործընթացներում օգտագործում են թերի, կեղծ և ոչ լիարժեք տեղեկատվություն, ինպես նաև հասարակության շփոթեցման միջոցով, երբ տնտեսվարող սուբյեկտներն իրենց ապրանքները շփոթության աստիճանի նմանեցնում են այլ ընկերությունների ապրանքներին:

Հանձնաժողովի կողմից բացահայտված խնդիրները համակողմանի դիտարկելու համար հատկանշական են հետևյալ դեպքերը:

Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություններ է իրականացրել կաթնամթերքի շրջանառության ոլորտում՝ մրցակցային խնդիրների բացահայտման նպատակով: Հանձնաժողովն իրականացրած դիտանցումներով արձանագրել է, որ մանրածախ իրացման ոլորտում գործող մի շարք տնտեսվարող սուբյեկտներ իրենց առևտրի օբյեկտներում ապրանքների գնապիտակների վրա իրացվող որոշ ապրանքներ մակնշել են որպես խտացրած կաթ և հալած պանիր, մինչդեռ նշված ապրանքների բաղադրությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանց բաղադրությունում պարունակում են բուսական յուղեր: Հետևաբար նշված ապրանքները համաձայն մաքսային միության համապատասխան կանոնակարգի պահանջների որպես խտացրած կաթ և հալած պանիր մակնշվել չեն կարող: Բուսական յուղերի օգտագործման դեպքում վերը թվարկված ապրանքները համապատասխանաբար պետք է մակնշվեն որպես «կաթ պարունակող խտացրած սննդամթերք շաքարով» և «հալած պանիր պարունակող մթերք»: Հետևաբար տնտեսվարող սուբյեկտների նման գործողությունները Հանձնաժողովի գնահատմամբ կարող են առաջացնել հասարակության մոլորություն, ինչը հիմք ընդունելով Հանձնաժողովը դրանք որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություններ, կիրառել պատասխանատվության միջոցներ և պահանջել վերացնել խախտումները:

Հանձնաժողով է դիմել «Նեմիրոֆ Ինթելեքթյուըլ Փրոփըրթի Իսթեբլիշմնթ» ընկերությունը հայտնելով, որ վերջինս հանդիսանում է «NEMIROFF» («ՆԵՄԻՐՈՖՖ») ապրանքային նշանի սեփականատերը և նշելով, որ հայկական շուկայում առկա են նշված ապրանքային նշանով կեղծ օղիներ: Վերը նշվածը հաշվի առնելով Հանձնաժողովը սկսել է ուսումնասիրություն, որի ընթացքում պարզել է, որ «NEMIROFF» ապրանքային նշանը 2005 թվականից ՀՀ-ում հանդիսանում է հանրահայտ ապրանքային նշան, այն պաշտպանվում է պետության կողմից և նշված օղիները լայն տարածված են սպառողների շրջանում: Միաժամանակ Հանձնաժողովը

պարզել է, որ սպիրտային խմիչքների շրջանառության ոլորտում գործող «Ա և Գ» ընկերությունն արտադրում և իրացնում է «NEMIROFF» ապրանքային նշանով՝ «Український мед» անվանումով օղիներ: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «Ա և Գ» ընկերությունը չի ունեցել «NEMIROFF» ապրանքային նշանի օգտագործման թույլտվություն և վերջինիս կողմից այդ ապրանքային նշանով օղիների արտադրություն ու իրացումը կարող են հասարակության շրջանում առաջացնել շփոթություն՝ իրական «NEMIROFF» օղիների նկատմամբ: Մրցակցության առումով խնդիրը կայանում է նրանում, որ ընկերությունները մեծածավալ ծախսեր են կատարում իրենց ապրանքային նշանի ճանաչվածության բարձրացման նպատակով և լինում են դեպքեր, երբ անբարեխիխճ ընկերությունն առանց այդ ծախսերի իրականացման փորձում է օգտվել սպառողներին արդեն իսկ հայտնի ապրանքային նշանից՝ շուկայում առաջացնելով անհավասար մրցակցային իրավիճակ: Տվյալ պարագայում պետք է նշել, որ «Ա և Գ» ընկերությունը նախկինում ևս (2016 թվականին) նմանօրինակ խնդրով, սակայն այլ անվանմամբ օղիների գծով հայտնվել է Հանձնաժողովի տեսադաշտում և ենթարկվել պատասխանատվության՝ յուրաքանչյուր օղու գծով 5 մլն դրամի չափով: Վերը նշվածը հաշվի առնելով Հանձնաժողովը «Ա և Գ» ընկերության գործողությունները որակել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում և հաշվի առնելով ընկերության կողմից կատարված խախտման կրկնակիությունը՝ կիրառել է պատասխանատվության միջոց 10 մլն դրամի չափով և հանձնարարել վերացնել Օրենքի խախտումները:

Հանձնաժողովը ուսումնասիրություն է իրականացրել գազավորված, շշալցված հանքային ջրերի շուկայում, որի համար հիմք է հանդիսացել ««Դիլիջան» հանքային ջրի գործարան» ՍՊ ընկերության դիմումը: Դիմումատու ընկերությունը նշել է, որ հանդիսանալով «DILIJAN» ապրանքային նշանի իրավատերը՝ ներկայումս շուկայում հանդիպում է անբարեխիղճ մրցակցության դեպքերի հանքային ջրեր արտադրող մեկ այլ ընկերության կողմից: Հանձնաժողովն ուսումնասիրությամբ պարզել է, որ «DILIJAN» ապրանքային նշանը 2009 թվականից պատկանում է ընկերությանը, սակայն շուկայում գործող մեկ այլ՝ «Էմ այ բի քոնսալթինգ» ՍՊ ընկերությունն արտադրում է հանքային ջրեր՝ որպես պատկերային նշան օգտագործելով «DILIJAN» ապրանքային նշանը: Վերը նշված գործողությունը Հանձնաժողովը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում, կիրառել պատասխանատվության միջոց և տվել խախտումները վերացնելու հանձնարարություն:

Էլեկտրատեխնիկային շրջանառության ոլորտում կատարած ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը բացահայտել է անբարեխիղճ մրցակցության մեկ այլ դեպք:

Այսպես, «Վենուս-Էլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը տարածել է գովազդ, որի համաձայն ընկերությունը էլեկտրատեխնիկայի իրացման ժամանակ իրականացնում է սպրինտ խաղարկություն: Ընդ որում, գովազդի համաձայն նշված ակցիան տարածվում է իրացվող ամբողջ տեսականու նկատմամբ, մինչդեռ ուսումնասիրությամբ Հանձնաժողովը պարզել է, որ ակցիան կիրառվում է միայն 40 000 դրամից բարձր արժեք ունեցող ապրանքների ձեռքբերման ժամանակ: Հանձնաժողովի գնահատմամբ «Վենուս-Էլ» ընկերության կողմից իրականացված գովազդում կիրառվող ակցիայի պայմանների վերաբերյալ տարածվել է ոչ հավաստի տեղեկատվություն, որը տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությամբ հանդիսանում է հասարակության մոլորեցման գործողություն: Հանձնաժողովը «Վենուս-Էլ» ընկերության գործողությունները որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն, կիրառել պատասխանատվության միջոց և տվել խախտումները վերացնելու հանձնարարական:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2019 թվականի ընթացքում ևս Հանձնաժողովը կշարունակի նշված ուղղություններով անհրաժեշտ աշխատանքների իրականացումը:

Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտված այլ խնդիրներ

Մրցակցային արդյունավետ միջավայրի ձևավորման հարցում էապես կարևորվում է արդար և հավասար վարչարարության իրականացումը բիզնես համայնքի գործունեությանն առնչվող բոլոր մարմինների կողմից: Հանձնաժողովը կատարվող ուսումնասիրությունների ընթացքում մեծ կարևորություն է տալիս հատկապես շուկաներում մուտքի խոչընդոտների բացահայտմանը, հավասար մրցակցային միջավայրի ձևավորմանը և մրցակցությունը սահմանափակող հնարավոր երևույթների վերացմանն առնչվող խնդիրներին: Համաձայն Հանձնաժողովի կողմից իրականացված մեծ թվով ուսումնասիրությունների արդյունքների՝ հաճախ հավասար մրցակցությունը խաթարող գործոնների վերացման խնդիրը գտնվում է այլ պետական մարմինների իրավասությունների շրջանակներում, հետևապես առկա խնդիրների լուծման շուրջ համագործակցությունն անհրաժեշտություն է: Ըստ այդմ, վերջին տարիներին Հանձնաժողովը համագործակցության շրջանակներում իրավասու պետական մարմիններին տրամադրել է տրանսպորտի, պետական գնումների, առողջապահության, բնապահպանության, գյուղատնտեսության, շինարարության, ծառայությունների և այլ ոլորտներում իրականացված

ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խնդիրների լուծման և կանխման վերաբերյալ առաջարկություններ:

Այսպես, կարևորելով պետական մարմինների դերը երկրում հավասար մրցակցային պայմանների ապահովման հարցում՝ Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն պետական մարմինների կողմից տնտեսվարող սուբյեկտներին լիցենզիաների, թույլտվությունների, համաձայնությունների և քվոտաների տրամադրման գործընթացում առաջացող մրցակցային խնդիրները բացահայտելու նպատակով: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գերատեսչությունների կողմից պետությանը պատկանող սահմանափակ ռեսուրսների օգտագործման իրավունքները տրամադրվում են ոչ մրցակցային կարգով: Այսպես օրինակ, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից բնական ռեսուրսներից օգտվելու հնարավորություն ընձեռող թույլտվության (ձկան, խեցգետնի և այլ պաշարների օգտագործում) տրամադրման գործընթացում առավել վաղ դիմում ներկայացրած տնտեսվարող սուբյեկտներն ստանում են հնարավորություն իրականացնելու տվյալ գործունեությունը, իսկ մնացյալ տնտեսվարող սուբյեկտները զրկվում են այդ հնարավորությունից, քանի որ ձկան արդյունահանման համար նախատեսված քվոտաները սպառվում են:

Անհավասար մրցակցային պայմաններ առաջանում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունքում: Այսպես կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բացօթյա առևտրի կազմակերպման կամ հանրային սննդի կազմակերպման համար տարածքների տրամադրման գործընթացում հստակ չափորոշիչներ առկա չեն, համապատասխան մրցույթներ չեն իրականացվում և տնտեսվարող սուբյեկտների մի մասին կարող է տրամադրվել թույլտվություն իրականացնելու բացօթյա առևտուր, իսկ մյուս մասին՝ ոչ:

Բացի այդ, Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև պետական մարմինների կանոնադրությունները և նրանց կողմից իրականացվող գործառույթները, որի արդյունքում պարզել է, որ պետական գերատեսչությունների կամ վերջիններիս ենթակայությամբ գործող մարմիններն ունեն առևտրային կամ ձեռնարկատիրական գործունեության իրականացման գործառույթներ: Ընդ որում, այդ գործառույթները վերաբերում են այնպիսի ոլորտներին (լաբորատոր փորձաքննություն, պահնորդական ծառայություն և այլն), որոնցում գործունեություն են իրականացնում նաև բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական մարմինները ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի

միջոցներից, չեն վճարում ձեռնարկատիրական գործունեության համար սահմանված հարկեր (ԱԱՀ, շահութահարկ և այլն), Հանձնաժողովի կարծիքով ստանում են առավելություններ մասնավոր ընկերությունների նկատմամբ և հայտնվում բարենպաստ պայմաններում:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովի կողմից պետական մարմիններին ներկայացվել են համապատասխան առաջարկություններ՝ ուղղված շուկաներում հավասար մրցակցային պայմանների ապահովմանը:

Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել նաև մաքսային սահմանին ապահովագրական գործակալների կողմից մատուցվող ծառայությունների շուկայում հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով: Գործող օրենսդրության համաձայն ավտոմեքենաները ՀՀ տարածք մուտք գործելիս պետք է ապահովագրվեն, որի իրականացման նպատակով մաքսային սահմանին հարակից տարածքում գործում են ապահովագրական գործակալներ: Կատարված ուսումնասիրության համաձայն Հայաստանում գործում են 6 ապահովագրական ընկերություններ, որոնց անունից ԱՊՊԱ պայմանագրերի կնքումն իրականացնում են ապահովագրական գործակալները: Ընդ որում Բագրատաշենի մաքսային կետին հարակից տարածքում գործող ապահովագրական գործակալներն առանձին վերցված միաժամանակ չեն համագործակցում ՀՀ-ում գործող բոլոր 6 ապահովագրական ընկերությունների հետ, այլ որպես կանոն հանդիսանում են նրանցից որևէ մեկի գործակալը: Նշված ապահովագրական գործակալները վերջին տարիներին գործել են մաքսային կետի տարածքից դուրս, ինչի արդյունքում սպառողների ներգրավման հարցում ունեցել են նույն հնարավորությունները: Սակայն համապատասխան պետական մարմնի կողմից մաքսային կետի սահմաններում գտնվող տարածքը 10 տարի ժամկետով վարձակալության տրամադրման համար 2017 թվականի դեկտեմբեր ամսին իրականացվել է աճուրդ, որին մասնակցած և հաղթող ճանաչված միակ ընկերությունը մաքսային կետի տարածքի ներսում հնարավորություն է ստացել մատուցելու ապահովագրական գործակալի ծառայություններ՝ ստանալով առավելություններ իր մրցակիցների նկատմամբ: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ապահովագրական գործակալները, այսինքն աճուրդի հնարավոր շահառուները տեղեկացված չեն եղել աճուրդի իրականացման վերաբերյալ, ինչի արդյունքում կազմակերպված աճուրդում մրցակցություն չի ապահովվել: Թեև Հանձնաժողովը կատարված ուսումնասիրության արդյունքում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումներ չի հայտնաբերել, այդուհանդերձ առաջարկել է համապատասխան շահագրգիռ պետական այլ մարմինների հետ

համագործակցության շրջանակներում չեղյալ համարել Բագրատաշենի մաքսային կետի տարածքում տարածքի վարձակալության նշված մրցույթը և համապատասխան տարածքներ տրամադրելիս մաքսային կետերի տարածքում ապահովագրական գործունեության իրականացման հավասար հնարավորություններ ապահովել ԱՊՊԱ պայմանագրեր կնքող ՀՀ բոլոր ապահովագրական ընկերությունների համար: Վերը նշվածի արդյունքում նախկին աճուրդը վերանայվել է և ներկայումս մաքսային կետի հարակից տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն ունեն նշված ծառայությունները մատուցելու մաքսային կետի տարածքում:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Հանձնաժողովը, հիմք ընդունելով տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրները, օգտվելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձից, ծրագրում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք կապահովեն ծրագրային տարում ամրագրված նպատակների արդյունավետ իրագործման խնդրի լուծումը: Մասնավորապես, դրանք ուղղված են մրցակցային միջավայրի ձևավորմանը, մրցակցային մշակույթի բարելավմանը, հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, այլ պետական մարմինների և միջազգային կառույցների հետ համագործակցությանը և այլն: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով ուսումնասիրությունների իրականացում՝ առավելապես ուշադրություն դարձնելով մրցակցային անհավասար պայմանների առաջացման, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների կիրառման, տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտման կամ շուկայից դուրս մղման հետ կապված հարցերին,
- պետական գնումների ոլորտում մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման, ինչպես նաև առանձին մրցույթներում հնարավոր մուտքի խոչընդոտների բացահայտման ուղղություններով ուսումնասիրությունների իրականացում,
- համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով ուսումնասիրությունների իրականացում, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրի հետևողական դիտարկումների կատարում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման և առկա խնդիրների լուծման համար,
- անբարեխիղճ մրցակցության դրսևորումների՝ տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացման, տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վարկաբեկման, հասարակության մոլորեցման, տնտեսվարող սուբյեկտի համբավի կամ վարկարժեքի վնասման դեպքերի բացահայտման և վերացման նպատակով

ուսումնասիրությունների իրականացում մի շարք ոլորտներում՝ մշտական ուշադրության կենտրոնում պահելով սուբյեկտների կողմից իրականացվող զեղչերի, տարբեր տեսակի ակցիաների, տրամադրվող բոնուսների արդյունքում առաջացած անբարեխիղճ մրցակցության դրսևորման հնարավոր դեպքերի բացահայտումը,

- մրցակցային մշակույթի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացման ապահովում՝ բացահայտված իրավախախտումների վերաբերյալ հրապարակային նիստերի անցկացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և բիզնես ոլորտի, այդ թվում զանգվածային լրատվության միջոցների և շահագրգիռ այլ մարմինների հետ համագործակցության իրականացման, Հանձնաժողովին կից հասարակական խորհրդի նիստերի անցկացման, բարձրացված մրցակցային հարցերի քննարկման և տվյալ ուղղությամբ ուսումնասիրությունների անցկացման միջոցով,
- սոցիալական նշանակության և բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում (այդ թվում՝ շաքարավազի, ցորենի, բենզինի շուկաներում) մրցակցային իրավիճակի վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում,
- ծառայությունների ոլորտներում ուսումնասիրությունների իրականացում՝ նպատակ ունենալով բացահայտել համապատասխան ոլորտներում ձևավորված մրցակցային միջավայրը և դրանց առնչվող խնդիրները,
- մրցակցային օրենսդրության վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունների, Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքների և իրավասության շրջանակների լուսաբանման միջոցով,
- տնտեսական մրցակցության վրա ազդեցություն ունեցող օրենսդրական փոփոխությունների իրականացման աշխատանքներին Հանձնաժողովի մասնակցության ապահովում,
- մրցակցային միջավայրի բարելավման նպատակով միջազգային համագործակցության ապահովում ինչպես մրցակցության ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կառույցների և կազմակերպությունների, այնպես էլ այլ երկրներում մրցակցության պաշտպանությամբ զբաղվող պետական մարմինների հետ կատարվող աշխատանքների միջոցով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան փորձագետների,

- մրցակցային միջավայրի բարելավման ուղղությամբ միջազգային համագործակցության շրջանակներում համապատասխան աշխատանքների իրականացում Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ փոխգործակցության ամրապնդման ուղղությամբ միջոցառումների իրագործում, այդ թվում՝ տեղեկատվության փոխանակում, համատեղ նիստերի իրականացում, փոխադարձ հետաքրքրության և սոցիալական նշանակություն ունեցող ապրանքային շուկաներում համատեղ ուսումնասիրությունների իրականացում և մրցակցային միջավայրի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակման աշխատանքներին ակտիվ մասնակցության ապահովում,
- մրցակցային արդյունավետ միջավայրի ձևավորման նպատակով համագործակցություն այլ պետական մարմինների հետ՝ անհավասար մրցակցային իրավիճակ ձևավորող գործոնների վերացման ուղղությամբ համատեղ աշխատանքներ կատարելու նպատակով,
- Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում:

Հանձնաժողովը վերը ներկայացված միջոցառումները նախատեսում է իրականացնել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության իրականացման խնդրի համար անկյունաքար են հանդիսանում տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները, որոնց անմիջական գործադրմամբ կարգավորվում են մրցակցության խնդիրները: Նշված մեխանիզմները սահմանվում են համաձայն իրականացվող մրցակցային քաղաքականության և գործում են Հանձնաժողովի իրավասությունների շրջանակներում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ծրագրի իրականացման համար նախատեսված, տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմներն են.

1. տնտեսական մրցակցության իրավիճակի բացահայտմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացում բարձր կենտրոնացվածության և սոցիալական նշանակության ապրանքային շուկաներում,
2. տեղեկատվության հավաքագրում՝ տնտեսվարող սուբյեկտների գործունեության և մրցակցային վարքագծի ուսումնասիրությունների ընթացքում, այդ թվում՝ հսկիչ գնումների, դիտանցումների և ստուգումների իրականացման արդյունքում,
3. տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կիրառման վերաբերյալ պարզաբանումների տրամադրում և հանրության իրազեկման նպատակով դրանց տեղադրում Հանձնաժողովի ինտերնետ կայքում,
4. եզրակացությունների տրամադրում՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված ակտերի, այլ փաստաթղթերի (կազմակերպված մրցույթների վերաբերյալ որոշումներ, արձանագրություններ և այլն)՝ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությանը հակասելու, ինչպես նաև մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող սուբյեկտի վարքագծի, կնքվող համաձայնությունների, պետական օժանդակությունների, ինչպես նաև համակենտրոնացումների արդյունքում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենդրության դրույթների խաթարման վերաբերյալ,
5. գործարարների հետ հանդիպումների անցկացում, մրցակցային օրենսդրության վերաբերյալ հարցերի քննարկում, խորհրդատվական բնույթ կրող աշխատանքների իրականացում՝ խախտումների հնարավորինս կանխարգելման նպատակով,
6. պատասխանատվության միջոցների կիրառում՝ մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների կայացման, անբարեխիղճ

մրցակցության գործողության դրսևորման, արգելված համակենտրոնացումները գործողության մեջ դնելու, արգելված պետական օժանդակության տրամադրման դեպքերում,

7. Օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ զգուշացման կիրառում՝ տնտեսվարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կանխման նպատակով,

8. Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված՝ պետական այլ մարմինների կարգավորման տիրույթում գտնվող մրցակցային խնդիրների վերահասցեագրում՝ դրանց լուծման նպատակով,

9. միջազգային համագործակցության շրջանակներում գործընկեր երկրների մրցակցային մարմինների հետ համատեղ ուսումնասիրությունների իրականացում,

10. տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքի խախտումների դադարեցում կամ դրանց հետևանքների վերացում և սկզբնական վիճակի վերականգնում,

11. Օրենքին հակասող պայմանագրերի փոփոխում կամ լուծում՝ մրցակցության պաշտպանության նպատակով,

12. համակենտրոնացման կամ պետական օժանդակության, պետական մարմինների, տնտեսվարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի կասեցում՝ ընդունած ոչ իրավաչափ ակտերի լուծարում՝ մրցակցության պաշտպանության նպատակով,

13. պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից Օրենքի դրույթների կիրառման վերաբերյալ խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցների, այլ փաստաթղթերի հաստատում՝ մրցակցային օրենսդրության կիրառման իրազեկման և խորհրդատվության տրամադրման նպատակով,

14. վերահսկողության իրականացում՝ Հանձնաժողովի որոշումների կատարման (պահպանման) նկատմամբ,

15. ստուգման, ուսումնասիրության (այդ թվում՝ հսկիչ գնման և (կամ) դիտանցման) իրականացում՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով:

IV. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մրցակցային իրավիճակի բարելավումը հնարավոր է ապահովել Հանձնաժողովի, պետական այլ մարմինների և հասարակության տարբեր խմբերի՝ գործարար համայնքը ներկայացնող կառույցների, լրատվամիջոցների, սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ջանքերի մեկտեղման արդյունքում: Վերը նշվածը հաշվի առնելով Հանձնաժողովի առաջարկությունները հետևյալն են.

1. Վերջին տարիներին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովը բացահայտել է բազմաթիվ դեպքեր, երբ առանձին ոլորտները կարգավորող տարբեր իրավական ակտերով սահմանված ընթացակարգերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը բացասաբար է անդրադառնել շուկայում ձևավորված մրցակցային միջավայրի վրա: Հաճախ եղել են դեպքեր, երբ մրցակցային մարմինների կողմից բացահայտված խնդիրները գտնվել են պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմնի կարգավորման տիրույթում, թեև դրանց չկարգավորված լինելը մեծապես ազդել է մրցակցային միջավայրի վրա: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված բոլոր խնդիրների կապակցությամբ Հանձնաժողովը դիմել է շահագրգիռ մարմիններին՝ իրենց կարգավորման տիրույթում գտնվող հարցերի լուծման նպատակով: Այս առումով, Հանձնաժողովը 2019 թվականին ևս շարունակելու է ակտիվ աշխատանքները պետական և տեղական ինքնակառավարման տարբեր մարմինների հետ՝ մրցակցության վրա բացասաբար ազդող երևույթների վերացման ուղղությամբ:

2. Հանձնաժողովը կարևորում է հասարակության և գործարար շրջանակների կողմից մրցակցային օրենսդրության հանդեպ պատասխանատվության գիտակցության ձևավորման, իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը: Հանձնաժողովը 2018 թվականի ընթացքում ևս կազմակերպել է մի շարք հանդիպումներ գործարար համայնքը ներկայացնող կազմակերպությունների հետ, որի ընթացքում ներկայացվել են մրցակցության օրենսդրության առանձնահատկությունները և քննարկվել բիզնեսի զարգացման խոչընդոտները: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովը չունի մարզային կառույցներ, որով պայմանավորված հնարավոր են դեպքեր, երբ մրցակցային խնդիրները հայտնվեն Հանձնաժողովի տեսադաշտից դուրս, 2017-2018 թվականների ընթացքում Հանձնաժողովը գործարարների հետ քննարկումներ է կազմակերպել

նաև մարզերում, որոնց արդյունքում վերհանված մրցակցային խնդիրներին տվել է համապատասխան լուծումներ: Միաժամանակ, ելնելով նախորդ տարիների ընթացքում կուտակած փորձից, Հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ հաճախ տնտեսվարող սուբյեկտները խախտում են մրցակցության պաշտպանության օրենսդրությունը տեղեկացվածության ցածր մակարդակի պատճառով: Բացի այդ, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացումը հնարավորություն է տալիս սպառողների միջոցով վերհանել և դիտարկման առարկա դարձնել մեծ թվով մրցակցային խնդիրներ, ինչպես նաև նպաստել դրանց արդյունավետ լուծմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովը նախատեսում է ոչ միայն ինտերնետային կայքի, այլև մամուլի հրապարակումների, տարբեր հաղորդաշարերի, քննարկումների միջոցով ապահովել մրցակցային օրենսդրության դրույթների վերաբերյալ հանրության տեղեկացվածության բարձր մակարդակ:

3. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում առկա խնդիրները արդյունավետորեն կարգավորելու նպատակով Հանձնաժողովը կարևորում է նաև գործող օրենսդրության կատարելագործումը՝ այն համահունչ դարձնելով հասարակական հարաբերությունների փոփոխություններին: Այս կապակցությամբ նշենք, որ 2018 թվականի մարտի 23-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է Հանձնաժողովի կողմից մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որն արտացոլում է մրցակցության օրենսդրության բարեփոխման հիմնական ուղղությունները և խթան կհանդիսանա մրցակցային իրավիճակի բարելավման համար: Օրենսդրական փոփոխությունների փաթեթով նախատեսվում է նաև ներդաշնակեցնել ՀՀ-ում գործող իրավական ակտերը ԵԱՏՄ նորմատիվ իրավական ակտերին կամ ԵԱՏՄ իրավական կարգավորումներին: Այս ուղղությամբ ևս Հանձնաժողովը 2019 թվականին շարունակելու է համապատասխան աշխատանքներ՝ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և ՀՀ-ում այն ներդնելու ուղղությամբ:

V. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովի կողմից կատարվող փոխգործակցության շրջանակներում առանձնակի կարևորվում է Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ ԱՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ համագործակցությունը, որի շրջանակներում արդեն իսկ Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են քննարկումներ մի շարք շուկաներում ապրանքների իրացման գործընթացների ուսումնասիրությանն առնչվող մեթոդաբանական հարցերի և առկա փորձի փոխանակման աշխատանքների իրականացման վերաբերյալ: Միաժամանակ, Հանձնաժողովի և ԱՀ ՀԾՏՄԿՊՀ-ի միջև համագործակցության շրջանակներում ԱՀ ՀԾՏՄԿՊՀ-ի աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով հրավիրվել և մասնակցել են Հանձնաժողովի կողմից կազմակերպված սեմինարներին, քննարկումներին: Հանձնաժողովները համատեղ աշխատանքներ են իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառման ուղղությամբ: Հանձնաժողովների միջև կնքված համաձայնագրի շրջանակներում իրականացվում է հավաքագրված տեղեկատվության պարբերական փոխանակում՝ հնարավորություն տալով գործուն արձագանքել առանձին շուկաներում հնարավոր խնդիրների առաջացմանը: Բացի այդ, համագործակցության շրջանակներում Հանձնաժողովն օժանդակել է ԱՀ ՀԾՏՄԿՊՀ-ին արտերկրի մրցակցային մարմինների գործելաոճին, վարույթների իրականացման ընթացակարգերին, մրցակցության ոլորտին առնչվող իրավական նորմերին և չափորոշիչներին, ինչպես նաև աշխատակիցների մասնագիտական կարողությունների ընդլայնման գործընթացին ծանոթանալու հարցում: Վերը թվարկված բոլոր ուղղություններով Հանձնաժողովը 2019 թվականին ևս շարունակելու է սերտ համագործակցությունը ԱՀ ՀԾՏՄԿՊՀ-ի հետ մրցակցային խնդիրների բացահայտման և կանխարգելման նպատակով:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում արդյունավետ համագործակցություն է ծավալել ՀՀ-ում գործող միջազգային և դոնոր կազմակերպությունների, մրցակցության պաշտպանությամբ զբաղվող օտարերկրյա կառույցների հետ: Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում միջազգային պայմանագրերով սահմանված՝ տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարումը:

Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից իրականացվող համատեղ ուսումնասիրություններին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հարուցված վարույթների իրականացմանը: Ընդ որում, հաշվի առնելով այն, որ կատարված ուսումնասիրությունների համաձայն վերջին տարիներին բազմաթիվ ապրանքային շուկաներում ՀՀ և ԵԱՏՄ մյուս անդամ երկրների միջև առևտրի ծավալներն էական աճ են արձանագրել, 2019 թվականին ևս Հանձնաժողովը նախատեսում է շարունակել համագործակցությունը՝ փոխադարձ հետարքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ ուսումնասիրությունների իրականացման, ինչպես նաև մրցակցային օրենսդրության իրավապայմանագրային բազայի կատարելագործման նպատակով:

Միաժամանակ Հանձնաժողովը ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի շրջանակներում 2019 թվականի ընթացքում կմասնակցի մի շարք ոլորտներում (այդ թվում՝ բժշկական սարքավորումների, ավիացիայի և այլ ոլորտներում) համատեղ ուսումնասիրությունների իրականացմանը, ինչպես նաև աշխատանքներ կիրականացնի նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված՝ մրցակցային միջավայրի բարելավման առաջարկների իրագործման ուղղությամբ:

Այսպիսով, Հանձնաժողովը 2019 թվականին հետևողականորեն կշարունակի սերտ համագործակցությունը վերոնշյալ կազմակերպությունների և մարմինների հետ՝ մրցակցային խնդիրների լուծման ուղիների բացահայտման նպատակով:

Հավելված N 1

Մի շարք շուկաներում ներմուծման գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների քանակը 2014-2017թթ.

Հ/հ	Ապրանքատեսակի անվանումը	տնտեսվարող սուբյեկտների քանակը	ԵԱՏՄ երկրներ				Այլ երկրներ				Ընդամենը			
			2014	2015	2016	2017	2014	2015	2016	2017	2014	2015	2016	2017
1	Ալյուր		17	91	59	119	13	9	9	11	30	99	67	130
2	Մարգարին		16	41	49	65	13	10	8	22	26	45	52	77
3	Բրինձ		9	21	30	36	24	33	44	32	31	47	65	58
4	Մակարոնեղեն		25	44	63	69	21	20	24	27	44	62	82	92
5	Բուսական յուղ		35	41	48	65	18	13	14	17	46	50	59	76
6	Հավի միս		2	15	36	34	27	29	30	31	28	44	57	57
7	Խոզի միս		0	1	6	9	28	23	24	22	28	24	30	29
8	Շոկոլադե սալիկներ և բատոններ		17	27	47	39	36	31	50	32	46	50	88	62
9	Շոկոլադե մածուկներ և շոկոլադե այլ արտադրանք		34	50	113	96	75	62	121	76	98	99	215	156
10	Ոսպ		11	17	34	38	11	11	6	9	17	23	39	46
11	Ոլոռ		13	18	27	34	4	5	1	9	15	22	28	42
12	Ցորեն		10	30	21	77	16	11	46	12	20	34	61	83
13	Շոկոլադ		6	15	16	20	13	19	23	16	18	31	36	33
14	Կարամելային արտադրանք		18	25	47	35	28	20	23	33	46	45	70	62
15	Կակաոյի փոշի		0	3	11	6	9	10	12	9	9	13	23	15
16	Շամպուն		27	48	70	27	119	121	129	138	146	169	199	159
17	Խնամքի պարագաներ		19	24	30	79	66	87	85	142	85	111	115	200
18	Մաքրող միջոցներ		25	59	83	103	178	145	156	158	203	204	239	243
Ընդամենը			284	570	790	951	699	659	805	796	936	1,172	1,525	1,620

Հավելված N 2

Աղյուսակ

Համաշխարհային մրցունակության
զեկույցում Հայաստանի և մի շարք երկրների մրցակցային միջավայրին
առնչվող ցուցանիշների վերաբերյալ

Երկիր	Դիրք									
	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների ազդեցությունը մրցակցության վրա										
						+105				
Հայաստան	***133***	***129***	***133***	***133***	***90***	***75***	***93***	***79***	***51***	***28***
Ռուսաստան	79	92	88	101	107	93	75	69	59	64
Ղազախստան	89	87	91	93	83	78	68	57	69	91
Վրաստան	95	98	113	112	121	119	103	88	76	67
Մոլդովա	-	-	102	111	130	133	125	124	127	122
Ուկրաինա	75	91	128	129	108	132	129	98	99	106
Լատվիա	67	57	70	59	51	62	64	61	65	79
Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը										
						+98				
Հայաստան	***132***	***132***	***138***	***138***	***116***	***97***	***105***	***88***	***77***	***40***
Ռուսաստան	95	107	108	111	124	116	102	83	82	83
Ղազախստան	90	92	113	121	95	91	94	68	83	84
Վրաստան	111	125	135	135	141	138	127	116	114	112
Մոլդովա	-	-	119	123	130	133	133	135	134	126
ՈՒկրաինա	96	111	126	136	132	137	136	136	136	124
Լատվիա	54	63	78	72	70	75	60	51	64	78

Տեղական մրցակցության ուժգնությունը										
					+70					
Հայաստան	***132***	***128***	***136***	***139***	***130***	***102***	***85***	***85***	***91***	***66***
Ռուսաստան	108	106	115	124	124	113	74	77	81	72
Ղազախստան	97	101	109	117	113	120	111	94	106	114
Վրաստան	114	115	124	128	127	123	105	91	78	94
Մոլդովա	-	-	101	104	108	119	99	103	114	95
Ուկրաինա	105	111	118	120	104	106	101	99	108	78
Ռումինիա	86	69	79	97	102	115	120	112	93	86